
**ԱՆԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ ՄԱՀ ՊԱՏՃԱՌԵԼԸ՝
ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԿԱԶՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ՄՈՎՍԻՍՅԱՆ Վ. ՅՈՒ.

Սպանությունները, որպես մեղքի տարբեր ձևերով կատարված հանցագործություններ, մարդկությանը հայտնի են դեռևս անհիշելի ժամանակներից: Համմուրաբիի օրենսգիրքը նշում էր դիտավորությամբ և անզգուշությամբ մահ պատճառելու առանձին տեսակներ: Հռոմեական ու շրջանի քրեական օրենքները, ինչպես նաև դրանցից առաջ կյանքի կոչված մովսիսական օրենսդրությունը մեզ հետաքրքրող հարցում է՝ ավելի որոշակիություն մտցրին, իսկ միջնադարյան ֆեոդալական պետությունների օրենքներում այդ սկզբունքը մեծ մասամբ անցկացվում էր համակողմանի պարզությամբ: Ինչ վերաբերում է միջնադարյան Հայաստանին, ապա այստեղ նույնպես հիշյալ սկզբունքը գտել է իր արտահայտությունը. առաջին հայ կանոնական օրենքները, ինչպես նաև ժամանակի ընթացքում հայերեն թարգմանված և Հայաստանում հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների կողմից ընդունված, երկրում դարեր շարունակ կիրառված օտար կանոնական օրենքներն իրենց իրավանորմերում հաճախ զուգընթացաբար նախատեսում են սպանության այդ հիմնական ձևերը: Դավիթ Ալավկա որդու «Կանոնները» (XII դ.), Մխիթար Գոշի (XII դ.) և Սմբատ Սպարապետի (XIII դ.) դատաստանագրքերը, իբրև աղբյուր, երբեմն բառացիորեն օգտագործելով հայ և օտար կանոնական իրավունքի հուշարձանների իրավանորմերը, իսկ ավելի հաճախ ինքնուրույնաբար՝ հենվում են նույն սկզբունքի վրա: Նշված իրավանորմերում դիտավորությամբ կատարվող սպանություններին զուգընթաց ընդհանրացնող գծերով նախատեսվում է նաև անզգուշությամբ մահ պատճառելը: Հայ քրեական իրավունքում անզգուշությամբ մահ պատճառելու և դրա պատժելիության մասին առաջին հիշատակումների հանդիպում ենք Հայոց կանոնագրքի տարբեր հիշատակարաններում:

Դավիթ Ալավկա որդու «Կանոններում», որպես առանձին և ինքնուրույն հանցակազմ, ուղղակիորեն նշվում է անզգուշությամբ մահ պատճառելը: Այսպես, ըստ 40-րդ կանոնի՝ «Այլ եթե ընդ քուն անկանի (մայր) ի վերայ մանկան, կամ անհոգացեալ մանուկն ի հուր անկանի և այրի՝ Ե ամ ապաշխարեսցէ՝ մինն սրբապահութեամբ, իսկ զԲ շաբաթապահութեամբ և դարձեալ գերկու երիցս քառասուն պահեսցի»¹: Նույն կարգով էլ 42-րդ կանոնում ասվում է. «Այլ եթե մարդոյ լինի ջորի խեռ կամ ձի կիցս ընկեց, կամ մարդակեր, կամ եզն հարկանող և անգիտասցէ և այլք ազդեսցեն նմա, բողոք բարձեալ զվնասն ցուցանիցեն և նա յանհոգս գայցէ ոչ հնարեսցի զնա որպէս արժան է, սպանցէ զոք. տէր նորա մահապարտ է: Թէ յայնս ուրբ անասնոց է, թէ ձի, ջորի, ի մեռլոյն տէրքն

¹ Թովմասյան Ա. Թ., Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Ե., 1977, էջ 153:

տացին, զի ի պէտս հոգւոյն ծախիցեն»²: Այդ կանոններում, որոնք ժամանակին պարտադիր ուժ ունեցող իրավանորմեր էին, ակներև է՝ հիմնականում նախատեսված էին անզգուշությամբ մահ պատճառելուն ըստ էության նման մի քանի հանցակազմեր, թեև կանոնների հեղինակը ավելի հետևողական լինելու դեպքում պետք է հասկանար, որ իր իսկ նկարագրած իրադարձությունների պայմաններում նույն այդ սպանությունները կարող էին տեղի ունենալ նաև հանգամանքների պատահական զուգադիպությամբ, հետևաբար դրանց սուբյեկտները չպետք է հետապնդվեին և պատժվեին: Դավիթ Ալավկա որդին 59-րդ կանոնում և մի քանի այլ կանոններում բավական ամբողջական նշաններով նախատեսում է սպանության այնպիսի հանցակազմեր, ըստ որոնց՝ նա տարբերում և որոշակիորեն միայնացից սահմանազատում է դիտավորյալ և անզգուշությամբ մահ առաջացնելու հասկացությունները: Ավելին, ակնհայտ է, որ հեղինակը գաղափար ունի անգամ մարդուն կյանքից զրկելու քրեականորեն անտարբեր, այսինքն՝ հանցակազմ չառաջացնող դեպքերի մասին: Ասվածի ապացույցն է 59-րդ կանոնը, որտեղ նշվում է. «Այլ թէ յանաւրնաց արշավանս առնիցեն առանց պատճառի ի վերայ քրիստաւնէից և ի ընդդիմամարտելն սպանութիւն հանդիպի, անպարտ են, Դ ամ բաւական է վասն սրբութեան անձին: Ապա թէ ի ձեռն կալեալ բերէ և կամաւ սպանանէ, արեան պարտ է: Այլ վասն խնդրելոյ կամ գրաւ առնելոյ իրաւապէս եկեացեն այլազգիք յերկիր քրիստոնէից, այրիցեն կամ սպանցեն և գերի առնուցուն, եթէ ի նոցանէ պատահի սպանութիւն, սուտանուն քրիստոնէայքն վճարեն, և կրկնապատիկ արեան պարտականք են: Իսկ գիշերամարտության պատահեալ սպանութիւն առանց պատճառի, այնպէս է, որպէս պարզաբար ի պատերազմի»³: Այսպես էր լուծվում անզգուշությամբ մահ պատճառելու պատժելիության հարցը հայ եկեղեցական-կանոնական իրավունքում և Դավիթ Ալավկա որդու «Կանոններում»:

Անզգուշությամբ մահ պատճառելը, որպէս առանձին հանցակազմ, նախատեսվում էր նաև Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում: Մխիթար Գոշը թվարկում է բազմաթիվ կոնկրետ դեպքեր Դատաստանագրքի երկրորդ մասում՝ իբրև անմիջական աղբյուր օգտագործելով մովսիսական իրավունքի որոշ օրինադրություններ Երկրորդ օրինաց գրքից, ինչպես նաև Բարսեղ Մեծի, Աթանասի և Հետևող հայրերի մի շարք կանոններից: Հոդվածում անզգուշությամբ մահ պատճառելը միասնական տերմինով անվանվում է «ակամայ» սպանություն: Այս «ակամայ» բառը, ինչպես անուղղակիորեն նկատել են հին և միջնադարյան հայ իրավունքի պատմության հարցերով զբաղվող որոշ գիտնականներ, իր լեզվական և իրավաբանական նշանակությամբ հաճախ նույնանում է հայերեն «անզգուշ» բառի հետ, որը մեր իրավունքի պատմության մեջ միշտ էլ «դիտավորյալ» եզրույթի հականիշն է համարվել:

Գլուխ ՄԼԳ-ում «Կամա և ակամա սպանությունների մասին» հոդվածում Գոշը, ընդունելով, որ «ակամա» սպանությունը կատարվում է բազ-

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 154:

մապիսի ձևերով, որպես օրինակ ներկայացնում է մի քանիսը: Ըստ Գոշի՝ անզգուշությամբ մահ պատճառելը տեղի է ունենում, «...եթե մեկը փայտ է կոտրում և կացինը ձեռքից դուրս թռչելով կաշում է մեկին ու սպանում: Եվ կամ փոքր բարձունքներից կամ լեռներից, երբ փայտ կամ քար է ցած գլորում և կաշում է մեկին ու սպանում: Եվ կամ այգուց կամ բանջարանոցից քար է դուրս գցում, կաշելով մեկին սպանում է: Կամ մեկը ծառից պտուղ վար գցելու համար քար է նետում և քարը մեկին կաշելով սպանում է: Կամ ծառից պտուղ թափ տալու ժամանակ, ծառի վրա քար լինի մնացած և ընկնելով մեկին սպանում է: Եվ կամ (ծառը թափ տվողի) գավազանն է ընկնում որևէ մեկի գլխին ու սպանում է նման այսպիսի բաներ, որի պատճառով մահ է լինում: Կամ երբ վարդապետը աշակերտին ըստ թույլատրելի չափի, խրատում է ծեծով, կամ հայրը որդուն կամ մայրը դստերը, կամ սկեսուրը հարսին, կամ եղբայրը եղբորը և կամ տերը ծառային և կամ տիկինը աղախնուն և այլ ոք, նման դեպքերում, երբ վնասը մահ է լինում: Եվ կամ, եթե մեկը հրապարակում է, երիվարն է վարում կամ այլ մի կենդանի կամ սայլ և ոտի տակ ընկնելով մահ է լինում: Եվ կամ որսի վրա նետ է արձակում և պատահաբար դիպչում է մեկին ու սպանում: Եվ կամ մեկը քար նետի, կարծելով, թե քար չէ ու մահ լինի: Եվ այլազգիների մեջ ակամա է, երբ եղբայրն եղբորը կամենում է սպանել և սա դառնալով նրան է սպանում կամ նման այդպիսի դեպքեր»⁴: Ճիշտ չէր լինի պնդել, թե այս օրինակների մեջ Գոշը ամբողջովին ինքնուրույն է, կամ նրա վերոնշյալ հանցագործությունները քրեական իրավունքի մեջ հայտնի են որպես անզգուշությամբ մահ պատճառել, բայց պետք է նշել, որ դրանց բացարձակ մեծամասնությունը նույնիսկ մեր ժամանակների տիրապետող ըմբռնմամբ, իրոք, անզգուշությամբ մահ պատճառելու օրինակներ են: Դատաստանագրքի երկրորդ մասում Գոշն անդրադառնում է անզգուշությամբ մահ պատճառելու պատժելիության հարցին: Այստեղ նա քննության է առնում հետևյալ երեք դեպքերը. ա) երբ այլազգին, այսինքն՝ մահմեդականը, դիտավորությամբ կամ անզգուշաբար մահ է պատճառում քրիստոնյային, բ) երբ, ընդհակառակը, քրիստոնյան է դիտավորությամբ կամ անզգուշաբար մահ պատճառում մահմեդականին, գ) երբ քրիստոնյան դիտավորությամբ կամ անզգուշաբար մահ է պատճառում քրիստոնյային⁵: Երեք դեպքերում էլ Գոշը սահմանում է համապատասխան պատիժներ: Ակնհայտ է, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքում անձի դեմ ուղղված ամենածանր հանցագործությանը՝ դիտավորյալ սպանությանը զուգընթաց՝ քննվում էր նաև անզգուշությամբ մահ պատճառելու հանցակազմը: Մեծ իրավագետ Մխիթար Գոշը հստակ շեշտում էր, որ դիտավորությամբ կատարված սպանությունը բոլոր դեպքերում պետք է ավելի խիստ պատժվի, քան անզգուշությամբ մահ պատճառելը: Հետևաբար, նույնիսկ սպանության գործերով քրեական արդարադատությունը պետք է կառուցվի սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքով. մարդկանց արարքների քրեական իրավաբանական որակման

⁴ Մխիթար Գոշ, *Դատաստանագիրք*, Ե., 2008, էջ 167-168: Տե՛ս նաև *Армянский судебник Мхитара Гоша, Е., 1954, статья 117, с. 214-215.*

⁵ Մխիթար Գոշ, *Դատաստանագիրք*, Ե., 2001, էջ 131:

հիմքում միշտ էլ պետք է դրվի մեղքի կամ որ նույնն է՝ մեղավորության ինստիտուտը: Անզգուշությամբ մահ պատճառելու և դրա պատժելիության մասին համապատասխան իրավանորմներ կան նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում, իրավանորմներ, որոնք իրենց բովանդակությամբ երբեմն համապատասխանում են Մխիթար Գոշի Դատաստանագրքի որոշ հոդվածներին:

Սմբատ Սպարապետն իր հասկացողությամբ «ակամայ» մահ պատճառելու պատժելիության անհրաժեշտության մասին խոսում է Դատաստանագրքի մի քանի հոդվածներում: Դատաստանագրքի 181-րդ հոդվածում Սմբատ Սպարապետը հետևյալ կերպ է ձևակերպում կանխամտածված և անզգուշությամբ մահ պատճառելը. «Նույնն են նաև երկակի բնույթ կրող դեպքերը (կանխամտածված և ակամա), եթե որևէ մեկը, մտածելով, որ սպանում է թշնամուն, դիպչում է ընկերոջը և սպանում նրան: Իսկ դիտավորյալ է համարվում այն սպանությունը, երբ ոմն մեկը, հարվածելով ցիցով, սպանում է մյուսին, կամ թե հարվածում է նրան քարով, և վերջինս նույնն է, եթե նրան հարվածեին թրով և սպանեին: Այդպիսի տարբեր սպանության դեպքեր բազմաթիվ են, սակայն նշված օրինակներով անգամ կարելի է դատել մյուսների մասին: Լինում են նաև դեպքեր, երբ սպանում են թույնով կամ մահ են առաջացնում սիրային ըմպելիքով: Նրբանց նույն կերպ են դասում մահվան մեղավորների դասին, լինի դա կին, թե տղամարդ, այնպես որ դրա համար պատժում են մահով»⁶: Նա խիստ մեղմ եկեղեցական պատիժ է նախատեսում այն դեպքերի համար, երբ քահանան ծառի կամ պատի վրա քար է դնում, իսկ դա ընկնում է և մարդ սպանում: Այդ քահանան գրկվում է պատարագ անելու իրավունքից: Եթե նույն արարքը կատարում է աշխարհիկ մարդը, ապա վերջինս ենթարկվում է ապաշխարանքի:

Քրեական արդարադատության իրականացման տեսակետից կարևոր է այն հանգամանքը, որ Սմբատ Սպարապետը, հետևելով Մխիթար Գոշին, դիտավորությամբ կատարված սպանությունների գործերի դատական քննության և հանցագործներին պատժելու իրավունքը վերապահում է աշխարհիկ դատավորներին, այսինքն՝ պետական իշխանության համապատասխան պաշտոնատար անձանց, իսկ անզգուշությամբ մահ պատճառելու գործերի քննությունը՝ հոգևոր դատարաններին: Այս փաստն ապացուցում է, որ Սմբատ Սպարապետը հստակ պատկերացում ուներ այն մասին, որ քրեական արդարադատությունը պետք է խարսխվի ոչ թե օբյեկտիվ, այլ սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքի վրա. հանցագործները՝ մանավանդ մարդասպանները, պետք է պատժվեն, իսկ այդ պատժի տեսակն ու չափը պետք է ընտրվեն հաշվի առնելով, թե տվյալ հանցավոր արարքը, ներառյալ՝ տվյալ սպանությունը, դիտավորությամբ («կամայ»), թե՞ անզգուշությամբ («ակամայ») է կատարվել:

Ընդհանուր առմամբ, ըստ հայ կանոնական օրենքների, ինչպես նաև ըստ Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերի՝ պատերազմում տեղի ունեցած սպանությունը քրեականորեն հետապնդելի ու պատժելի արարք չէր համարվում: Դա նշանակում է,

որ մեր միջնադար-

⁶ Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Ե., 1958, էջ 155:

յան օրենքները մարդուն կյանքից զրկելու նման դեպքերը խստորեն տարբերում ու սահմանազատում էին այն դեպքերից, երբ մարդը կյանքից զրկվում էր մեկ ուրիշի մեղավորությամբ՝ հանցավոր դիտավորությամբ կամ հանցավոր անզգուշությամբ: Ըստ նրանց՝ ուրիշին ֆիզիկապես ոչնչացնելը, տվյալ դեպքում՝ թշնամուն սպանելը, հանցագործություն չէ, հետևաբար դրա կատարողը դատական կամ մեկ այլ կարգով չպետք է հետապնդվի ու չպետք է դատվի: Բայց մեզ հետաքրքրող տեսանկյունից այստեղ կարևորը ոչ միայն այն է, որ պատերազմում թշնամու զինվորին կամ նրա բանակին պատկանող այլ անձի սպանելը հանցագործություն չէր համարվում և չէր պատժվում, այլև այն, որ պատերազմի ընթացքում զուգադիպությամբ կամ շփոթությամբ կամ իրարանցման ընթացքում յուրայինին սպանելը նույնպես հանցագործություն չէր համարվում: Սըմբատ Սպարապետի Դատաստանագրքի 174-րդ հոդվածում ասվում է. «Նա, ով անզիտությամբ կսպանի իր ընկերոջը պատերազմում իրարանցման կամ կոտորածի ժամանակ, օրենքով դրա համար պատասխանատվություն չի կրում: Սակայն լիարժեք մաքրվելու համար հարկ է նրան երեք տարով բանադրել համայնքից, նա պետք է ողորմություն բաժանի, որպեսզի խղճով խոստովանի: Այդ բոլորին պարտավոր են հսկել դատավորները, որ չթափվի անմեղ արյուն»⁷: Ազգային դատաստանագրքերի վերաբերյալ օրինակներն էլ բավարար են ապացուցելու, որ անզգուշությամբ մահ պատճառելու երևույթն արծարծվել է դեռևս վաղ միջնադարում, և դրա պատժելիության հիմքում մեղավորության սկզբունքն է՝ այս բառի իրավաբանական իմաստով: Դրանով իսկ միջնադարյան իրավագետները իրավաբանորեն բացառում են մարդուն քրեական պատասխանատվության կանչելու և պատժելու ամեն մի հնարավորություն, երբ այդ մարդու՝ ուրիշի մահը առաջացրած գործողություններն իրենց բնույթով հանցավոր գործողություններ չեն:

ПРИЧИНЕНИЕ СМЕРТИ ПО НЕОСТОРОЖНОСТИ КАК СОСТАВ ПРЕСТУПЛЕНИЯ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

МОВСИСЯН В. Ю.

Резюме

О причинении смерти по неосторожности в качестве состава преступления впервые упоминается в различных памятниках Армянского Свода правил. В “Канонах” Давида Алавки-сына, в “Судебнике” Мхитара Гоша и Смбата Спарапета данному составу преступления уделено особое место. Примечательно, что еще с незапамятных времен в Армении закладывались основные положения и принципы виновности, но при этом исключалась любая возможность наказания в случаях, когда действия, повлекшие за собой смерть человека, по своей природе не содержали состава преступления.

⁷ Նույն տեղում, էջ 150: